



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 507  
Յուլիս 2, 1991

Մեծայարգ  
Տիար Արմէն Զաքարեան  
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Շրջակօ.

Յարգելի Տիար Զաքարեան,

Սուսցած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները, որոցմով կը տեղեկացուի թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 17, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին չորս անդամներ: Կը տրուի քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրուի նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Արնըլտ Բորէսեան
- Ծորն Նահապետեան
- Կարօ Տատեան
- Սթեֆանի Յակոբեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ, ինչպէս նաեւ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը պէտք է կաուարուի համաձայն թեմական Կանոնադրութեան տրամադրութիւններուն:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցւանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Միտոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ